207
U-79

2004

28+8

1547
199-62
470
К07
Ц-79
36835
329/11

ԱՒԵՏԱՐԱՆԻ

ՀՕՐՈՒԹԻՒՆ

կամ

Մէն Աբրաբ ծառայի պատմութիւն, որ Քրիստոսի հաւատքովն երանելի եղաւ։

Թարգմանութիւն

Եւեսրէ դպիր-Նէ։

Ի ՄՈՍԿՈՎ,
Ի Տպարանի Հայոց Ազգային Տեսչ Լազարեանց։
1840.

Գոս. Պետական Գրադարան
Гос. Публичная библиотека
ՀՍՍՀ — СССР
им. А. Мясникяна
Ա. Մասնիկյանի անվան

ПЕЧАТАТЬ ДОЗВОЛЯЕТСЯ

съ тѣмъ, чтобы по отпечатаніи представлено было въ Цензурный Комитетъ узаконенное число экземпляровъ. Москва 29 Сентября 1839 года.

Цензоръ В. Флеровъ.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ։

Մին Քահանայ պատմուեմ՝ թէ երբ որ Ընկլիզ երկրուեն մին քանի տարի ծովին մէջ էի բնակված, մին անգամ մին նաւի վերակացու կապիտան ինձ մօտ եկաւ և յայտնեց՝ թէ նա իրան տան մարդկանցումն իմ ժողովրդի անդամ է։ Ասաց՝ Տէր, հիմիկ երեք տարի է որ ինձ մօտ մին արաբ ծառայ կայ. էս բարի տղայս հիմիկ կամք ունի մկրտվելու։ Ես նորան խոստացելեմ որ ձեզանից խնդրեմ՝ թէ կարելի է որ նորան մկրտեք։

Ես նորանից հարցրի թէ՝ նա քրիստոնէական հաւատքին համար մին բան իմանումէ թէ չէ։

Նա ինձ պատասխան տուաւ՝ թէ ես էդ կողմանէ հաստատ հաւատացած եմ, թէ լաւ իմանումէ. նրահամար, որ նա քրիստոնէական հաւատքին համար ամէն տեղ և ամէն ժամանակ խօսումէ, և թէևս մարդիք նորան ծաղրը էն անում և ասում՝ թէ զուրես հետևում էդ օրէնքին, նա էն ծաղրներին համբերութեանով տանումէ։

Աղոցն. Մի թէ դու նորա ծառայութիւն անելուցն բաւական ես։

Աղոց. Զափիցն աւելի, նորանից մին աւելի լաւ և պատուական ծառայ մարդ չի կայ։

Աղոցն. Նա հենց ամէն ժամանակ էդպէս էր, թէ չէ։

Աղոց. Զէ. առաջին տարին՝ որ ես նորան ինձ մօտ բերի, շատ վատ էր կառավարվում. բայց յետին երկու տարին էնքան լաւացաւ՝ որ կարելի չէ բաւական գովել։

Աղոցն. Լաւ. պէտք է որ ես նորան տեսնեմ և լաւ մտիկ տամ՝ թէ նա արժանի է որ մասնակից լինի մկրտութեան խորհուրդին, և կամ թէ նա կարդալ իմանում թէ չէ։

Աղոց. Նա կարդալը մեծ աշխատանքով է սովորել. հիմիկ էլ լաւ կարդում, որ մեր ընտանիքն էլ ասումն՝ թէ Աստուածաշունչը ամէնը իմանում։ Ընկլոզերն էլ լաւ խօսում, եթէ կամենաք՝ նորան կուղարկեմ ձեզ մօտ։

Աղոցն. Հատ լաւ. էքուց կէսօրից ետև ուղարկեր նորան ինձ մօտ։

Աղոց. Զորս սահմանումն ձեզ մօտ կըլինի, կըտեսնէք թէ կարելի է նորան քրիստոնէական հաւատքի մէջ ընդունիլ թէ չէ։ Այս խոստմունքըս տուաւ ինձ և գնաց։

Ես էս բանի համար շատ ուրախացայ. էլ շատ ուրախութիւն էլաւ իմ սրտիս, հենց էն երկրի մարդկանց մինը, Աւետարանի ճշմարտութեանովն լուսաւորել՝ որ ես նորա անքաղդութենին համար շատ անդամ լաց էի լինում. միտք անելով՝ թէ՝ նորանց անքաղդութեան պատճառն հենց մենք քրիստոնեայքս ենք։

Այն ասած ժամանակումն իմ աչակերտ Ռաբան եկաւ. նա ջահիլ էր և սրամիտ, դէմքն էլ գեղեցիկ էր։

Ե։։ Նորան նստացրի և հարցրի. քո աղայն ինձ ասայ՝ թէ դու կամենումես քրիստոնէական հաւատքն ընդունիլ։

Ն։։։։։ Ճշմարիտ է Տէր, ես շատ կամենումեմ որ քրիստոնեայ լինիմ։

Ե։։։։։։ Ի՞նչ է դորա պատճառն։

Ն։։։։։ Ո՞ւս Տէր, ես գիտումեմ որ քրիստոնեայքն մեռնելոյ ժամանակն գնալու են երկնքի արքայութիւնն։

Ե։։։։։։ Հա՛ ժամանակ է՝ որ էդ կամքդ ունիս։

Ն։։։։։ Այն ժամանակիցն ետև՝ որ ես Ամրիկա երկրումն մին քարոզ տուող մարդից մին անդամ քարոզ եմ լսել՝ միշտ էս ցանկութիւնս ունիմ։

Ե՞ռասցի՝ Դու հրտեղ ես ծնվել։

Ն՞ասաց՝ Աֆրիկա երկրումն, և իմ փոքր երեխայ լինելոյ ժամանակումն ինձ սպիտակ մարդիքն գերի և ետիր են արել։

Ե՞ռասցի՝ Այդ ի՞նչպէս պատահեց։

Ն՞ասաց՝ Մին օր հայրըս և մայրըս թողեցի գնացի ծովի ղրաղն, որ կորաներ հաւաքեմ. հենց սկսեցի հաւաքել որ յանկարծ մին փոքր նաւից մին քանի սպիտակ մարդիք դուրս վազեցին և ինձ բռնեցին։ Այն ժամանակիցն ետև էլ իմ հայրըս և մայրըս չեմ տեսել։

Ե՞ռասցի՝ Նորանք քեզ ի՞նչ արին։

Ն՞ասաց՝ Ինձ նաւացրին էն փոքր նաւի մէջումն և տարան Ամսիկա անուն կղզին (ԱՊՈՅՆ)։ Էնտեղ ծախեցին ինձ մին աղայ մարդի, որ ես նորան ծառայութիւն արի երեք տարի։ Բայց երեք տարիցն առաջ էս կապիտանս որ իմ կողմանէ ձեզ հետ խօսացել է, ինձ նորանից ծախու առաւ և նորան էլ էնպէս ծառայութիւն էլի անում կէմումն։ Օ՛ֆ. նա լաւ աղայ է. նա ինձ ազատ է արել, ես հիմիկ էլ նորան ծառայութիւն եմ անում։

Ն՞ոքան ռասցի ՝Ասա՝ ինձ. Ամերիկա գալուցդ առաջ հոգւոյ համար ի՞նչպէս էիր միտք անում։

Ն՝ տասց. Այս էն ժամանակումն հոգին չէի իմանում թէ ինչ է՝ և նորա մասին մին մարդից մին բան չէի լսել։

Ա՝ տասցն. Պատմիր ինձ՝ թէ ինչպէս էս եկել Ամերիկա, և էն ժամանակն որ դու եկիր էնտեղ՝ քեզ թէ ինչ պատահեց.

Ն՝ տասց. իմ Աղայն կէմոնն ինձ էնտեղ տարաւ իրան հետ և էնտեղ նորա հետ մնացի մին ամիս։ Այս մին ամսումն մին քարոզ տուող մարդ տեսի։

Ա՝ հարցնի ինձ՝ Նա թէ ինչ ասաց իրան քարոզի միջումն։

Ն՝ պատասխանէց ինձ՝ Աստ. նա ինձ ասաց՝ թէ ես մեծ մեղաւոր եմ։

Ա՝ տասցն. Թէ՝ չպէս. միթէ նա մէնակ քեզ էր ասում։

Ն՝ տասց. Հա. ես էնպէս եմ իմանում, թէ՝ չպէս ականջ դնող մարդիք շատ կային, բայց ամէնքն էլ իմ կողմանէս էր ասում։

Ա՝. Թէ՝ ինչ ասաց նա։

Ն՝. Ինչ որ իմ սրտումս կար էն ամէնքն ասաց։

Ա՝. Թէ՝ ինչ յատուկ բաների վերայ խօսեց։

Ն՝. Իմ յատուկ մեղքերիս վերայ, իմ տրվիտու

բայ. որ ես ոչինչ հաւատ չեմ ունեցել։ Լոն բարի քարոզիչն ինձ լաւ յայտնեց, որ ես մին բարի բան՝ միտք չեմ արել, և բարի բան՝ չեմ գործել։

Ե՝. Լոլ ի՞նչ ասաց քեզ։

Ն՝. Նա մին քանի ժամանակ երեսըն դէպի ինձ շուռ էր տալիս՝ և ասումէր թէ՝ Յիսուս Քրիստոս եկաւ որ մեղաւորայ համար մեռնի ինչպէս որ սպիտակ մարդկանց, էնպէս էլ՝ սև մարդկանց համար. և առ հասարակ ամէն չար մեղաւորների համար՝ էս ինձ շատ և շատ լաւ թուեցաւ։

Ե՝. Ի՞նչից իմացար թէ՝ նա ամէնըն էլ քո կողմանէ ասաց։

Ն՝. Ներանից իմացայ, որ ես հաւատացած էի, թէ էն մարդկանց մէջն ինձ նման մեղաւոր մարդ չկար. շատակէ՝ որ էն բարի քարոզիչն իմացաւ թէ ես էնտեղ էի։

Ե՝. Ապա դու ի՞նչ միտք արիր քո հոգւոյ համար՝ երբ որ նա Յիսուս Քրիստոսին վերայ էնպէս քարոզեց։

Ն՝. Ո՞ւմ իմ Տէր. ինչպէս վերթռայ, որ նա ասաց թէ՝ չար մարդիքն դժոխքի միջումն կրակով պիտի տանջվին։

Ես ինձ համար միտք արի՝ թէ շատ չար եմ, և որա համար շատ լաց ելայ։ Ինչ ժամանակ

որ սկսեց Քրիստոսի սիրոյն համար խօսիլ՝ թէ մեղաւորներին ինչպէս է սիրում. էն ժամանակն սկսեցի էլ շատ լաց լինել։ Ես կամենում էի Յիսուս Քրիստոսին սիրել, բայց չէի իմանում, թէ ինչ կերպով սիրեմ. սրա համար սկսեցի էլ աւելի լաց լինել։

Ե՞. Նրանից ետև էն մին ամսուն ուրիշ էլ քարոզ լսեցիր թէ չէ։

Ն՞. Ի՞նչպէս չէ. Աղայիս հրամանովն էն-տեղ երէք անգամ՝ էլ գնացի քարոզ լսեցի։ Էն ժամանակից ետև, ես էլ աւելի էի կամենում Քրիստոսին սիրել և էն բաներըն որ Քրիստոս ասել է ամէնըն կատարել. բայց ինձ թուում՝ թէ իմ սիրտս մին քանի ժամանակ էնպէս պնտանում՝ ինչպէս մին քար։

Ե՞. Նրանից ետև էլ մին քարոզ լսե՞լ ես թէ չէ։

Ն՞. Զէ. նրանից ջոկ՝ որ էստեղ յետին կիրակի օրն լսեցի, ուրիշ քարոզ չեմ լսել. նրանից ետև ես շատ կամեցայ որ մկրտվիմ Յիսուսի Քրիստոսի անունովն. նրա համար որ ինձ մին քրիստոնեայ բարեկամ չունէի, որ ինձ փոքր երեխայ լինելոյ ժամանակումն կարոզանար մկրտել։

Ե՞. Քո Ամերիկա երկրումն առաջին քարոզ լսելուցդ ետև՝ միտքդ ի՞նչպէս էր. մին մար-

դի էլ էն ժամանակն խորհուրդը ասի՞լ ես թէ չէ։

Ն՝. Հ՝. էդ մասին Աստուածանից ջոկ ուրիշի չեմ ասել։ Քարոզիչն ասաց թէ՝ Աստուած կըլսի խեղջ և մեղաւոր մարդկանց աղաչանքըն. սրա համար ես էլ իմ արտասուքըն նորա առաջին թափեցի, որ նա էլ վերջապէս ինձ լսեց։ Ես շատ անգամ միաք եմ անում Քրիստոսին համար և ցանկանումեմ նորան հետևիլ և նման լինիլ։

Ե՝. Կարդալ իմանումես դու։

Ն՝. Մին քիչ իմանումեմ։

Ե՝. Քեզ հիվ է սովորցրել։

Ն՝. Աստուած ինքն է սովորցրել։

Ե՝. Դու էդ ի՞նչ մտքով ես ասում։

Ն՝. Էն մտքովն եմ ասում, որ Աստուած իմ սիրտս ցանկութիւն քցեց կարդալց համար, և էնպէս դժուար չէլաւ ինձ համար կարդալն։ Իմ Աղայն ինձ մին Աստուածաշունչ բաշխեց, և կէմուցմն մին սաղտաթ կար՝ որ գիրքերըն ցոյց տուաւ ինձ՝ նրանից ետև Աստուծոյ օգնութենովն ես ինքս սովորեցի կարդալըն։

Ե՝. Աստուածաշնչումն դու ի՞նչ կարդացիր։

Ն՝. Յիսուս Քրիստոսի համար ամէն բաներըն կարդացի, թէ ի՞նչպէս է սիրում մեղա-

ւորներին. չար մարդիքն նորան՝ թէ՞նչպէս թա-
կեցին. նա մեռաւ և գերեզմանիցն վեր կացաւ
և էս ամէնքս քաշեց խեղճ արաբիս համար։
Էս շատ շատ լաց եմ լինում ինչ ժամանակ
որ իմ միտքս եմ բերում՝ թէ Քրիստոս խեղճ
Ադամին էնքան սիրում։

Լ։. Մարդիքն թէ՞նչ են ասում քո Աստ-
ուածաշունչ կարդալոդ համար՝ և հետևելոդ
համար, որ Քրիստոսի հաւատքն իմանաս։

Ն։. Չար մարդիքն, որ չեն սիրում Քրիս-
տոսին, ինձ շատ յիմար մարդ են ասում և
արաբի շուն և սև կեղծաւոր։ Էս սրանից մին
քանի ժամանակ նեղանում եմ. բայց որ միտքս
եմ բերում թէ քրիստոնեայն պէտքէ չի բար-
կանայ, որովհետև Քրիստոսին էլ էնպէս վատ
և չար բան էին ասում. էն ժամանակն ես նո-
րանց իսկի մին պատասխան չեմ տալիս. նրա
համար որ Քրիստոս էլ երան վերայ սուտ բան
ասողներին իսկի պատասխան չէր տալիս։

Խեղճ արաբի էս պարզմտութիւնքն և անկեղ-
ծաւոր սիրտն ինձ չափիցն աւելի ուրախացրուց։
Ապա ես կամեցայ՝ հաւատքի մին քանի գլխաւոր
բաների համար հարցնել նորան։ Էն սահմանումն
Պօղոս առաքեալի բանն միտքս եկաւ՝ որ հա-
ւատքի համար կարճառօտաբար խօսում։ Ո-
ՐՔԷՆ ՀԱՒԱՏՔ, ՅՈՅՍ, ԱՀՔ, ԷՍ ԷՐԷԽՍ, Ե-
ՍՈՒՍԱՆՈՒՄ ՄԷՆՔ՝ ԱՀՔՆ Է։ Ապա հարցրի թէ՝ ասսի

ինձ՝ հաւատքն ի՞նչ է կամ ի՞նչում է կենում քո հաւատքն։ Ի՞նչ ես միտք անում Քրիստոսի և քո հոգւոյդ համար։

Ն՝։ Ես հաւատումեմ՝ որ Յիսուս Քրիստոս եկաւ աշխարհքս մեղաւորներին փրկելոյ համար, և ինձ էլ կըփրկի։ Թէև շատ խեղճ աբաբ և անասելի մեծ մեղաւոր եմ։

Ե՝։ Ի՞նչ է քո յոյսդ և ի՞նչ բանի ես սպասում էս կեանքումս և էն կեանքումն։

Ն՝։ Ես յոյս ունիմ՝ որ Քրիստոս ինձ վերայ հոգացողութիւն կունենայ, և յոյս ունիմ որ էս կեանքի չարութենից և մեղքից ինձ կըփրկէ։ Յոյս ունիմ որ մեռնելուցս ետև միշտ նորա հետ մին տեղ կըլինիմ։

Ե՝։ Ի՞նչ ես միտք անում Քրիստոնէական սիրոյ համար։ այսինքն ճիմ և ի՞նչ էս շատ սիրում։

Ն՝։ Ես սիրումեմ Հայրն Աստուած էն պատճառի համար, որ նա էնքան ողորմած է, որ իրան որդին մեղաւորաց փրկութեան համար ուղարկեց աշխարհքս։ Ես Յիսուս Քրիստոսին սիրումեմ, էն պատճառի համար՝ որ նա ինձ սիրումէ։ Ես մարդկանցն սիրումեմ, սևերինել,

սպիտակներինէլ, էն պատճառի համար՝ որ նո-
բանցէլ Աստուած է ստեղծել. ես բարի քրիս-
տոնեաներին սիրումեմ, էն պատճառի համար՝ որ
Քրիստոս նորանց է սիրում և նորանք էլ Քրիս-
տոսին։

Այն ջահիլ արաբի հետ իմ առաջին խօսակ-
ցութիւնը էսպէս էր։ Այս նորանով շատ ու-
րախացայ, յոյս ունելով՝ որ նորան եկեղեցւոյ
ծոցի մէջ ընդունիմ իրան ուզելոյն պէս։ Բայց
կամենում էի որ էլ աւելի նորա հետ խօսիմ
և հաստատապէս իմանամ նորա վարքը և կեն-
ցաղավարութիւնը։ Այս պատճառիս համար խօսք
տուի, որ մին քանի օրից ետև գնամ նորա տե-
սութիւն՝ իրան Աղայի տունը։

Երբ որ նա իմ կըշտից գնաց, էն ժամա-
նակն միտք արի՝ թէ Աստուած իրան Որդւոյ
արիւնովն երկրի ամէն ազգերը էլ ծախու ա-
ռել է։ Ու թէ և նորանց միջից շատերը
մին քանի մարդկանց արծաթասիրութենովն աշ-
խարհական վատ ծառայութեան ծանր լծոյ տակն
ընկան մին քանի ժամանակ, բայց փառք լինի
Աստուծոյն՝ որ նորանց միջից շատերն էլ կանչ-
վել են էն փառաւոր ազատութեան մէջ, որ
նորան մէնակ Աստուծոյ որդիքն են վայելում,
և էսպէս ազատվել են սատանայի ծառայութե-
նից, որ շատերին բռնումէ իրան անսահման
իշխանութեան տակն։

Հատ ուրախացնող մտածմունք է թէ աբաբները էլ իրանց ձեռները կըմեկնեն դէպի Աստուած։

Երկրի թագաւորութիւներ օրհնեցէք Աստուծոյն, և նորան սաղմոս ասացէք Սաղ. ԿԷ. 32. 33։

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ.

—

Այս իմ աշակերտ Աբրաբի հետ առաջին անգամն տեսութիւն անելուցն մին քանի օր ետև ես տանիցն Ճանապարհ ընկայ, էն մտքովն որ գնամ նորան տեսնեմ և նորա հետ մին էլ խօսակցութիւն անեմ իրան Աղայի տանն, որ իմ տանիցս մին աղաՃ Ճանապարհ հեռու էր։ Այն Ճանապարհն որ ես գնում էի, մին թումբի վերայ անցնումը որ լցված էր սիւրուներով որ արածում էին էն լաւ և քաղցր խոտերըն. էն չոպաններըն որ նորանց հոգացողութենին էն սիւրուները յանձնված էին, էստեղ և էնտեղ կացած էին և պահպանում էին նորանց։ Այս ամէնը լաւ պատկեր էր, որ նորանով իմ վիճակը և իմ պաշտօնը իմանամ։ Ինչու որ՝ իմ լայն և արձակ թէմական ժողովուրդն հենց էս թումբիցս հեռու չէր. որ նորանց հոգիքն իմ հոգացողութեանը էին յանձնված, և որ նորանց համար պէտք է որ ես պատասխան տամ էն օրն՝ որ մեր մեծ չոպանըն այսինքն Քրիստոսըն կերևի։

Սրա համար էլ էս չոպանական պատկերս՝ որ ես իմ աչքիս առջևան ունէի, իմ միտքս բերաւ իմ հոգևոր պարտաւորութիւնը։ Ես էլ շատ ուրախացայ էս մտածմունքովս՝ թէ իմ քարեկամ ջահիլ արաքէն հեռացած սիւրուի ոչխարքն է, որ նորան էլ Յիսուս Քրիստոս կը-կանչէ իրան ձայնն լսելոյ համար. պատճառն որ՝ մին ոչ-ոչ կը-լսէնի ի մին չոպան և ամէն տը-գերն կը-տեսնեն որ նորա շուրջն հաստատ է ի Քէ-ռէն Ռէլեռ։ (Յոհան. Ժ. 16։ Մատթէ. ԺԸ. 30)։ Վերջն մատացայ մին քերթի, որ նորա վերջն շատ եամաջ էր. ձիուցն վեր եկի և մին ծառից կապեցի։ Ծովի դաղղանների դեսուտեն գնալն էն քերթի տակն, որ ինձանից ցած էր, ախորժ և անդադար ձայն էր հանում, և էս տեսիլքն շատ մեծ և զարմանալի էր, և մարդոյ միտքն շարժումէր որ Աստուծոյ մեծ վառքն իմանայ և նորան երկրպագութիւն տայ։ Ինչու որ՝ երևումէր՝ թէ հենց Ստեղծողն ինքն էս իրան ստեղծվածների միջումն իրան յայտնումէր և կանչումէր ամէնին, որ իրան երկրպագութիւն տան և պատուեն։ Իմ՝ երեսը յետ դարձրած դէպի էն քարքարոտ և աւազոտ կողմն, շատ տակ էր՝ մին սև ռանգով մարդ տեսի՝ որ մին գիրք էր կարդում, և որովհետև սև ռանկովն սպիտակ քարերիցն յայտնի ջոկվումէր. ես շուտով իմացայ՝ թէ էս իմ աշակերտ Աբրաքն է որ իրան Աստուածաշունչն է կարդում։

Ես շատ նեղութեամբ և դժուարութեամբ սարիցն վեր եկի էն փիլաքաններովն որ ձուկը բռնողներն և չոպաններն շինել էին։ Նա էնպէս մտիկ էր տալիս իրան զբքին՝ որ ես նորան շատ մօտացայ և նա ինձ չի տեսաւ։

Ե՞. Հարցրի թէ՝ Գուլիէլմոս՝ դո՞ւ ես։

Ն՞ ասաց. Ա՞խ. ես ինչպէս ուրախ եմ, որ ձեզ տեսնումեմ։ Դուք ի՞չպէս եկիք էստեղ. ես էնպէս էի իմանում, թէ Աստուածանից և ինձանից զոկ էստեղ էլ մարդ չի կայ։

Ե՞. Ես գնացի քո Աղայի մօտ՝ որ քեզ տեսնեմ. պատահեց որ էս ճանապարհը բռնեցի եկի։ Լաւ հավայ էլած ժամանակին ես շատ եմ գալիս էստեղ ծովին և կէմիներին մըտիկ տալոյ համար։

Ընդ քո Աստուածաշունչդ է։

Ն՞. Իմ Տէր՝ էս իմ սիրելի պատուական և անգին Աստուածաշունչն է։

Ե՞ ասաց. Ես շատ ուրախ եմ որ տեսնումեմ, թէ էդքան լաւ աշխատանքի մէջն ես Գուլիէլմոս, էդ լաւ նշան է։

Ն՞ ասաց. Ինչ հարկէ, էս նշան է՝ թէ Աստ-

ՀՍՍՀ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍՍՀ — СССР
им. А. Мясникяна
Ф. 32.9/1 36295

ուած ինձ սիրումէ, բայց ես նորա առաջին մեղաւոր եմ։

Ե։. Ի՞նչով ես մեղաւոր։

Ն։. Նրանով որ ես նորանից խսկի մին անգամ բաւական չեմ եղել. խսկի դէպի նա բաւական աղօթք չեմ արել. խսկի միտք չեմ արել թէ՝ ո՞վ է ինձ էսքան բարի բաներ տուել։ Ա՞ոլ իմ Տէր. ինձ էն է վախացնում, որ իմ սիրտս շատ չար է։ Շատ ցանկանումեմ, որ ես էլ ձեզպէս լինիմ։

Ե։. Գուլիելմոս, ի՞նձ նման ուզումես լինիլ. ինչու համար։ Ես էլ էնպէս եմ, ինչպէս դուս ես էլ քեզ պէս աղքատ և տկար մեղաւոր եմ. ես էլ էի կորչելու, եթէ Աստուած իրան անչափ բարութենովն և ողորմութենովն ինձ մութ խաւար տեղից չէր հանել, և իրան անչափ ողորմութենովն և սիրովն կորուստից չէր ազատել և ղաբուլ չէր արել. մեր միջումն ջոկութիւն չի կայ, երկուսսել պակասվեցանք Աստուծոյ փառքից, էն պատճառըն՝ որ մեղաւորենք։

Ն։. Զա՜. իմ Տէր. ես ձեզ նման չեմ, ես կարծումեմ որ ինձպէս մեղաւոր խսկի չի կայ, և խսկի մին մարդ էնպիսի սիրտ չունի, ինչպէս ես։

Ե։ Քո զդացողութիւնդ լաւ է Գուլիելմոս, և նման է նորան՝ որ իրան սրտի միջումն յայտնի է տեսնում թէ իրան մեղքերն անչափ են, և որ էլ իմանում էն մեծ և պատուական գինը, որ Յիսուս Քրիստոս տուել է մեղաւորներին առնելոյ համար։

Ն։ Հա։ Տէր։ թէ և ես գլխաւոր մեղաւորների մին եմ։ բայց Յիսուս Քրիստոսի արիւնովն փրկվել եմ։ Ես շատ հաւատումեմ որ Յիսուս Քրիստոս խեղճ արաբի համար մեռաւ։ Օ։ ի՞նչքան չար կըլինէր խեղճ և անպիտան Արաբի համար, եթէ Քրիստոս չէր մեռած նորա համար։ Նա մեռաւ էն մարդի համար, որ մեղաւորների գլխաւորն էր։ Ես էս մին բանովս իմ օրիստս հանգստանումեմ։

Ե։ Գուլիելմոս, ի՞նչ կարդացիր Աստուածաշնչումն։

Ն։ Ես էն կարդացի թէ աւազակն (թուլին) ինչպէս խօսեց Քրիստոսի հետ՝ էն ժամանակն որ երկուսն մին տեղ խաչված էին, և թէ Քրիստոս նորան ինչ ասաց։ Այս մարդի աղօթքն ինձ շատ լաւ է թուում, որ ասաց։ (յիշեր ինձ Տէր։ (Ղուկ։ ԺԳ։ 42)։ Միտքդ բեր Տէր, խեղճ մեղաւոր Արաբին։ Ահա ես էսպէս եմ աղօթք անում առաւօտներն և մին քանի ժամանակ էլ գիշերներն։ Շատ խօսքեր իմ միտքս

բերել չեմ կարողանում, և նորա համար էս խոսքերը կրկնումեմ, թէ միտքդ բերով Տէր, խեղճ և մեղաւոր արարքին։

Ե։ Հաւատացիր գուլիէմոս, որ Քրիստոս քո էս աղօթքը կընդունի։ Նա որ բաշխեց և ընդունեց աւազակը խաչին վերայ. յատուկ դիտումամ որ քեզ էլ անտես չի անիլ։ Նա իսկի մընին որ նորա մօտ է գալիս՝ դուրս չի քցիլ։

Ն։ Իմ Տէր, ես դորան հաւատումամ. բայց իմ սրտումս մեղք շատ կայ, և էս ինձ վախացնումէ և տրամացնումէ։ Իմ Տէր, տեսնո՞ւ էք դուք էս կորաներըս ի՞նչպէս պինա կըպչումեն քարերին. յատուկ էնպէս էլ մեղքերը իմ սրտիս են կպչում։

Ե։ Ճշմարիտ է իմ բարեկամ. բայց մին ուրիշ նմանութիւն բեր։ Դու կպած չէ՞ս Քրիստոսին հաւատալով իրան մահուանն, ինչպէս էս կարաներս քերձերին են կպել. հաւատացիր որ նորա սերբեցն քեզ ոչի՛նչ չի կարող բաժանել, ինչպէս որ մրրիկն (բօրանն) կորաներըն չի կարողանում բաժանել քարերիցն։

Ն։ Հենց էդէ, որ ինձ շատ պէտք է։

Ե։ Իմ բարեկամս. ատա՛ ինձ էդ մեղքդ չի՞ ծանրացնում քեզ, որ դրան կողմանէն դու

ատումես. ես գիտումեմ որ դու դորան ատումես և ուզում՝ որ ինչքան կարողութիւն ունիս աշխատիս որ թոք դորանից ազատվիս, էսպէս է՞ թէ չէ։

Ն։ Ճշմարիտ որ էդպէս է, ես քոլորը աշխարհքը կըտայի՝ որ թոք անմեղ լինէի։

Ե։ Գնա՛ Քրիստոսի մօտ և նորա հետ բարեկամ լինիր իմ եղբայրս. նա իրան պատրաստ և մատաղ արաւ մեղաւորների համար. Ն։ Ինձ՝ չաշէց մէջ ասէն։ պանջանչը ի՞ նէլը-ինէ-քը։ նա խոցվէցաւ մէջ մեղց հոմար, ի պատժվէցաւ մէջ անօրէնութիւնց հոմար. մէջ խաղաղութիւն նորա հոմար է ի մէնչէլ նորա խոցէրանէն էնչ քժշկվէց։ (Ես. ԾԳ. 5)։ Ն։ մէջ ասէն մեղչէրը։ իրանն վէրայ ապաւ։ Գնա՛ համարձակ Քրիստոսի մօտ որ փրկիչ է ամէն մեղաւորների համար։

Ա։ բաքն ինձ պատասխան տուաւ շալով՝ թէ կըգնամ, բայց շատ յետի և շատ յետի եմ գընում. ես կըկամենայի վաղտաղ կամ թուչիլ Քրիստոսի մօտն։ Նա շատ ողորմած է խեղճ արաքի վերայ, որ ձեզ ուղարկել է որ նորան էդ բաներըն իմացնէք։

Ն։ Մի՞ թէ հենց առաջին անգամ լըսե՞լ ես էս ճշմարտութիւնները։

Ն։ Ա՞յ իմ Տէր, դորանք իմ սիրտըս ուրախացնում են էն ժամանակից ետև որ ամ-

բիկա երկրումն էն բարի քարոզը լսեցի։ Միտք-
նե՞րդ է որ նորա համար անցկացած շաբաթին
ձեզ ասացի։ էն ժամանակն որ ձեզ մօտ էի։

Ե։ Լաւ՝ իմ բարեկամ, ես հիմիկ հա-
ւատացել եմ որ Աստուած իրան լուսովն քեզ
լուսաւորել է և բաշխել է քեզ իմացողու-
թիւն որ իմանաս իրան ողորմածութիւնը, որ
նորանով իրան Որդին տուաւ որ քեզ համար
մեռնի։ Ես հիմիկ յոյս ունիմ որ դու ջանք
անես նորա պատուիրանքներըն պահելոյ համար։
ես յոյս ունիմ որ ամէն կողմանէ քո Աղայի
կամքըն հրամանքըն կատարես, հաճոյանաս քո
Աղայի կնկանն և քո ընկեր ծառաներին։ Լոն
մարդըն որ իսկապէս սրտով քրիստոնեայ է,
պէտքէ որ նա ամէն բանի և գործի մէջն էլ
քրիստոնեայ լինի։ Ով որ Քրիստոսին ճշմար-
տութեանով հաւատումէ, պէտքէ որ իրան հա-
ւատքն գործքով ցոյց տայ։ (Յակ. Բ. 18)։ Իմ
բարեկամ՝ էսպէս է՞ թէ չէ։

Ն։ Ճաշմարիտ էդպէս է, ես կամենումեմ
էդ ամէնըդ անել, կամենումեմ որ ամէն բանի
մէջ հաւատարիմ լինիմ։ Ա՞խ. ես ինչպէս
նեղանումեմ, երբ որ միտքս եմ բերում,
թէ ես ինչպէս անհաւատ ծառայ էի մինչև էն
ժամանակն, որ Քրիստոս ինձ լուսաւորցրուց
իրան Աստուծային լուսովն։ Ես հիմիկ կամ-
նումեմ իմ աղայի աչքին քաղցր լինիլ, մօտ
էլած ժամանակն էլ, հեռու էլած ժամանակն

էլ. էն պատճառն որ՝ ես գիտումեմ թէ Աստուած ինձ ամէն ժամանակ տեսնումէ։ Ես գիտումեմ որ՝ եթէ ես Աղայիս ներհակ մեղանչեմ, Աստուծոյ ներհակ եմ մեղանչում, և սրանով նորան բարկացնումեմ։ Այլ Քա՞ ինձ ի՞նչ պէս կըսիրէ, եթէ ես էն բանըն չի գործեմ, որ նա է հրամայել։ Ես սիրումեմ իմ ընկերներին, թէպէտ նորանք ինձ շատ չէն սիրում. և շատ անգամ աղօթք եմ անում Աստուծոյ, որ նորանց ողորմութիւն անէ։ Ես ինչ ժամանակ որ նորանք ինձ վերայ չար խօսք են ասում և աշխատումեն որ բարկացնեն ինձ. էն ժամանակն ես իմ միտքս եմ բերում, թէ Քրիստոս՝ որ խեղճ արաբի տեղն լինէր, էսպէս խօսքերով պատասխան չէր տալ. բայց նա քիչ կըխօսէր և աղօթք կանէր իրան թշնամիներին համար. էս պատճառովա համարիր թէ ես էլ չեմ խօսում. բայց Աստուծոյն աղօթք եմ անում որ նորանց թողութիւն տայ։

Ես ինչքան որ էս Արաբի հետ խօսեցի, էնքան աւելի յայտնի էլաւ շատ նշաններով՝ թէ նորա հոգին լուսաւորվել է վերևից Աստուածանից և սուրբ հոգւոյ շնորհքովն լըցված էր։

Բաւական երկար ժամանակ նորա հետ խօսակցութիւն արի և ես նորանից խմացայ՝ թէ նորա Աղայն էն օրն մինչև երիկունի ժամանա-

կրն տանիցն դուրս էր գնացել և նորան էլ մին երկու սահաթ ուսխաթ էր տալել։

Ես նորա հետ խօսեցի՝ թէ Քրիստոնէական մկրտութիւնն ինչ պարտաւորութիւն, յատկութիւն և օգուտ ունի։ Նա ինձ արժանի երևեցաւ, որ էս խորհուրդըս ընդունի, և ես էլ ուրախացայ էն յուսովն՝ որ նա սրանից ետև էլ զարիպ կամ նորաեկ չի ասվիլ, բայց քաղաքացի սրբոց և Աստուծոյ ընտանի կըկոչվի։ (Եփես. Բ. 19)։ Նորան ասացի թէ, Աստուած խոստացել է թափել շատ ազգերի վերայ ոչ թէ մէնակ մկրտութեան ջուրըն, բայց էլ իրան երկնային շնորհքի ցողըն։ Եւ ըստ կամաց ծառայութեանդ ողորմեցեր մեզ։ Եւ ըստ ողորմութեանդ տուր մեզ։ Եւ ի գոհութիւնս հրաշեալ գործոց քոց։ Եւ ի օրհնութիւնս սրբոց քոց։ (Հոգեւ. ԺԱ. 3)։

Նա ինչ ասաց. Հայ Տէր. Աստուած կարող է սաղդել ինձանում յիստակ սիրտ և բարի հոգի։ (Սաղ. Ճ. 12)։ Նա կարող է ինձ վերայ մշակով (փընջով.) ցողել որ ես սուրբ լինիմ. նա կարող է որ ինձ լուանայ և ես ձիւնի նման սպիտակ լինիմ։

Աստուած տայ քեզ էս ողորմութիւնը և հաստատէ քեզ շնորհքի մէջ։

Ես շատ ուրախացայ հոգւով նրա համար՝ որ նա շատ սիրով և պատուով էր խօսում՝ իրան

ծնողաց համար որ նորանցից հեռացել էր երե-
խայ լինելոյ ժամանակումն, և որ շատ էր ցան-
կանում՝ որ Աստուած ինչ կերպով որ լինի
լուսաւորէ նորանց։

Եւ սասցի. Կարելի է որ էս կէտերի մը-
նի միջումն՝ որ հիմիկ ենք տեսնում քարոզիչ
մարդիք են գնում էն կողմերն որ տեղ որ քո
ծնողքն են. նրա համար որ բարի աւետիք տան
փրկութեան համար՝ ինչպէս որ էն երկրի մարդ-
կանցն, էնպէս էլ քո ծնողացն եթէ դեռ սաղ
լինին։

Նա տարիցն վեր կացաւ և կանչեց. հվ իմ
սիրելի ծնողներ. հվ իմ սիրելի մայր, հվ իմ
ողորմած փրկիչ. օ՛խ՝ եթէ դու կանգնիր փրը-
կել նորանց հոգին և նորանց հոգւոյ աչքերն
բա՛ցայիր՝ տեսնելոյ էն որ դու ես արել մեղա-
ւորների համար։ Ապա երևումէր թէ նորա սիր-
տըն կոտրվել էր։

Եւ նորան սասցի. Իմ Բարեկամ. ես հի-
միկ կամենումում, որ քեզ հետ յատուկ քո
հոգւոյ, և քո ծնողաց հոգւոց համար աղօթք
անեմ։

Ողորմութիւն արէք իմ Տէր. էդ շատ լաւ
է, աղո՛թք արէք խեղճ արաքի հոգւոյն համար
էստեղ էլ, ամէն տեղէլ։

Ահա նոր և մեծ աղօթքի տուն. ծովի աւա-
զըն մեր ոտի տակն էր, թումբերն և դալղա-

ներքն մեր ժամի պատերքն էին, և երկինքն նոր-
րա ծածքն էր։ Հիտակ որ էստեղ առաջ աղօթ-
քի տեղ չէր։ բայց էս անդամս սրբութեան
տեղ էլաւ, և ես էլ նորան միշտ էնպէս կըհա-
մարեմ։ Առանց տարակուսանաց գիտումեմ, որ
Աստուած էստեղս մեզ հետ էլաւ։ Էս աղօթք
արի, արաքըն արտասունք թափեց, նորա սիր-
տըն լիքնէր քարեպաշտութենով։ Էս էլ շատ
շարժվեցայ իմ սրտումս, և սկսեցի նորա հետ
'ի միասին լաց լինիլ։ Յետին օրուն յայտնի
կըլինի՝ որ մեր արտասունքն Հշմարիտ քրիս-
տոնէական սիրոյ արտասունքն էին։

Այս ժամանակ էր հասել յետ դառնալոյ,
ես կանեցի նորա կանոն վերայ. դուրս եկինք
էն քարի փիլաքանոցն թումբի գլուխն, որ
տեղ որ իմ ձիս թողել էի։ Խաղաղութիւն
և շնորհակալութիւն նորա երեսին վերայ պատ-
կերանում էին։ Էս կանեցի նորա կանոն վե-
րայ եղբայրական սիրով, ինչու որ՝ Հշմարիտ եղ-
բայր նա էլաւ ինձ համար, և իմ սրտումս ու-
րախացայ որ գտել էի էսպիսի ազգակից. բա-
րեւեցի և բռնեցի ձեռքիցն. մին ժամանակ խօսք
դրի՝ որ մին անգամ էլ իրար տեսնենք մինչև
նորա մկրտվիլն՝ և բաժանվեցայ նորանից.

Աստուած ձեզ օրհնէ իմ Տէր. ես էլ ա-
սացի՝ քեզ էլ էնպէս, իմ քրիստոնէական բա-
րեկամս և ընկերս յաւիտեանս յաւիտենից.
Ամէն։

ԵՐԲՈՐԴ ՄԱՍ.

Այս քաղցր խօսակցութիւնս՝ որ իմ աշակերտ Արաբ ին հետ արել էի, իմ սրտումս շատ մտածմունք վեր կացրուց՝ որ կարող չեմ խօսքով ասել։ Յետ դարձայ գնացի տուն մտածմունքերով լցված էն հաւատքի ճշմարտութենին և դէպի Աստուած դառնալոյն համար՝ որ ես հենց հիմիկ տեսի և լսեցի։

Որքան յայտնի է՝ որ մեր փրկութիւնն գտնըվում մէնակ հաւատքով և կախվում ոչ թէ մեզանից, բայց Աստուծոյ շնորհքիցն, որ մարդոյ գործքից չի լինի, և ոչ ով չի պարծենայ։ (Էփես. Բ. 8. 9)։ Այն սուրբ հոգին որ կեանքի պատճառն և աղբիւրն է, նրանից ջոկ ով էր կարող էնքան փոփոխութիւն անել, որ խաւարըն լոյս դառնայ, յիմարութիւնն իմաստութիւն և խոնարհութիւն դառնայ, կռապաշտութեան տգիտութիւնն, դէպի Քրիստոնէական մաքուր հաւատքն դառնայ։ Ով թէ որքան յայտնի է Աստուծոյ ողորմութիւնն և կարողութիւնըն՝ որ յայտնըվեցաւ մեղաւորներին կանչվելովը խաւարից դէպի լոյսն։ Ով մարդ որ

քրիստոնէական անուն ունիս քեզ՝ լուսաւորված երկրներումն. ինչպէս լաւ օրինակ և դաս է քեզ համար էս հասարակ պատահմունքս, որ էս կռապաշտ մարդս յետ է դառել դէպի Ճշմարիտ Աստուծոյ գիտութիւնն։

Սրանից ետև ես էլի քննեցի և իմացայ նորա կառավարվիլը իրան Աղայի մարդկանց մօտն և ինչ որ ես լսեցի՝ ամէնն ինձ համար շատ քաղցր էր. էնպէս՝ որ ես էլ նորա վարքի կողմանէ մին տարակուսութիւն չունէի։ Սրանից ետև էլի մին քանի անգամ նորա հետ խօսակցութիւն արի Աստուծոյ խօսքը սովորցնելոյ և նորա միտքն քննելոյ համար էնպիսի կերպով որ ես արժան էի իմանում նորա հոգին լուսաւորելոյ համար։ Նա ամէն ժամանակ իրան հետ Աստուծաշունչը տանում էր և գործիցն պարսպված ժամանակումն կարդումէր։ Ես շատ անգամ տեսել եմ՝ որ Ճշմարիտ երկրպագութիւն տուողներն՝ որ աղքատութեան պատճառով չէն կարացել ջահիլ լինելոյ ժամանակումը կարդալը սովորել՝ շատ հետևումն իրանց հոգին լուսաւորելոյ համար և Աստուծոյ բաները իմանալոյ համար, և վերջումն շատ հեռուսողութեանով սովորումն կարդալը. էնպէս որ շատ ջերմեռանդութեանով Աստուծոյ բանը թէ իրանց և թէ՝ ուրիշների համար կարդան։

Ես արաբիս նոր օրինակն ինձ ցոյց տուաւ, որ նա էնպէս հեշտութեանով սովորել էր.

ինչու որ հոգւոյ փրկութեան համար ջերմեռանդ էր։

Ամէն շաբաթումն ես սովորութիւն ունէի՝ որ մին տուն գնամ՝ (որ էն կապիտանի տանիցն շատ հեռու չէր) պատուելի քրիստոնէական բարեկամներին տեսութիւն անելոյ համար. որ էնտեղ հաւատքի կողմանէ խօսինք, իրար խրատ տանք և աղօթք անենք։ Էս շատ օգուտ իմացայ, որ Աբրաբին էլ բերել տամ էնտեղ և իմ մտքումս էնպէս դրի, թէ ամէնին էլ հաճոյ և օգտակար կըլինի էս բանս. երբ որ էնտեղ տեսնեն ճշմարիտ քրիստոնէի պարզութիւնըն և սրբութի բաց լինիլըն։ Էս յոյս ունէի որ էս օրինակով, այսինքն, Աբրաբի պարզութիւնըն և բաց լինիլըն տեսնելով մին քանի մարդիք՝ որ ես նորանց համար հոգս էի անում, բարեպաշտութեանն աւելի ջերմեռանդութենով ծառային և հոգւոյ արթնութենովն աղօթքին աւելի պարապվին։

Սրա համար ես նորա աղայիցն ռուսխաթ ստացայ՝ նորան էն ժողովքի մէջ տանելոյ համար. նա երևելի Աստուածավախ չէր, և հոգևոր բաներով քիչ էր պարապվում. բայց ինձանից շատ շնորհակալ էր՝ որ իրան ծառայի բարին էի կամենում, որ նորա կառավարութիւնըն նա էնքան գովումէր։

Էն խօսք դրած օրումն ես ձիով գնացի էն

տունն որ ինձանից մին աղաչ Ճանապարհ հեռու էր և միշտ սովորաբար էնտեղ հաւաքվում էինք։ Երբ որ էն տանն մօտեցայ տեսի իմ բարեկամ Աբրաքին նստած մին ծառի տակն՝ որ ինձ սպասում էր։ Ձեռին բռնած ունէր մին փոքրիկ գիրք որ ես էի բաշխել նորան, և Աստուածաշունչն էլ իրան մօտիկ տափի վերայ դրած էր։ Նա ինձ տեսաւ կանգնեց և զարմանալով ասաց։ Օ՛խ իմ Տէր՝ ինչքան ուրախ եմ, որ ձեզ տեսնումեմ։ ինձ թուումէ թէ շատ ժամանակ է որ ես ձեզ սպասեցի։

Ն։ Իմ բարեկամ, ես յոյս ունիմ որ դու առողջ լինիս։ Ես եկել եմ որ քեզ տանեմ իմ բարեկամներիս մօտ։ որ նորանք ինչպէս ես կարծումեմ Աստուծոյ էլ բարեկամ են։ մենք ամէն չորեքշաբթի գիշերուն գնումենք իրար հետ ժողովվումենք մեր փրկութեան Ճշմարիտ հարկաւոր բաներին վերայ խօսելոյ համար և ես էլ հաւատացել եմ, որ դու ամէնին համար սիրելի և քաղցր զօնաղ կըլինիս։

Ն։ Զէ։ ես դեռ արժան չեմ որ էնպէս բարի մարդկանց հետ լինիմ, չէ՝ իմ Տէր։ ես մեղաւոր եմ, բայց նորանք քրիստոնեայ են։

Ն։ Եթէ դու մընիցն հարցնէիր, էն ժամանակն ամէն մէկն քեզ կասէր՝ թէ իրանից աւելի չար մարդ չի կայ։ Նորանց միջիցն շատերն են՝ որ առաջ անօրէնութեամբ էին կե-

նում. Աստուծոյ բանելովն չէին պարապվում, և Քրիստոսին դէմ մեծ թշնամի էին, ինչպէս գործքով էնպէս էլ մտածմունքով։ Բայց Աստուծոյ շնորհքն նորանց յետ դարձրուց իրանց վատ ճանապարհներից, և նորանց սիրտն լուսաւորեց և աւետարանական սիրոյն մատնակից արաւ։ Տեսնում ես դու էնտեղ խեղճ մեղաւորների հասարակութիւնն, որ անդադար քաղցր ձայնով Փրկչին փառք են տալիս, ես յոյս ունիմ որ դու էլ քո ձայնըդ մեր ձայներին հետ խառնես։

Ն. Հայ. Տէր. հենց էս է՝ որ ինձ աղքատ տրաքիս պէտք է։ Այս խօսակցութիւնն անելով՝ հասինք մեր բարեկամների տունն. ուղիղ սրտով և ուրախ երեսով եկին մեր առաջն։ Իմ բարեկամ Աբրաբի էն օրուանից էնտեղ գնալն նորանց յայտնի էր, և էնտուր համար նորանց երեսին վերայ շատ ուրախութիւն փայլումը՝ ինչ ժամանակ որ ես Աբրաբի ձեռքիցն բռնեցի տարի նորանց մօտ և ասացի. իմ բարեկամները, ես ձեզ համար Աֆրիկա երկրից մին եղբայր եմ բերել. նա ցանկանում՝ որ ձեզ տեսնէ, ընդունեցէք նորան ձեզ մօտ Քրիստոսի սիրովն։ Մին բարեպաշտ գեղացի մարդ (որ նորա լեզուն և սիրտն լեքն էին քրիստոնէական սիրով և խոնարհութեամբ) ասաց. Տէր մենք ամէն ժամանակումն ուրախ ենք որ տեսնում ենք մեր սիրելի քարոզիչն և չոպանն. բայց հիմիկ էլ աւելի ուրախ ենք, որ դուք բերել էք

մեզ մօտ էնպէս քաղցր ընկեր։ Մենք լսելենք թէ՝ մեր փրկիչն ինչպէս ողորմած է դորա վերայ։ Ապա նա յետ դառաւ դէպի Աբրաքն և ասաց. սիրելի բարեկամ ձեռքդ տուր ինձ, Աստուած քեզ հետ լինի թէ էստեղ և թէ ամէն տեղ, և օրհնեալ լինի նորա անունն. (Սաղ. ԿԲ. 17). էն պատճառն որ՝ նա կանչում իրան երկրպագութիւն տալոյ և ծառայութիւն անելոյ համար էնպէս անսուրբ մեղաւորներին, որ նորանց միջումն մենք էլ ենք դասված. որովհետև Աստուծոյ ողորմութիւնն անչափ է մեղաւորներին վերայ։ Երբ որ մնաւ տունն՝ ամէնքնէլ բարևեցին և նորա հետ խօսացին էնպէս, ինչպէս որ մին յատուկ բարեկամի հետ։

Նա ասաց. Աշմարիտ է իմ Տէր՝ ես չեմ գիտում, ինչ ասեմ էս բարի բարեկամներին. ես կարծումեմ թէ էս նմանումն էն բաղդաւորութեանն և երանութեանն որ արքայութեան մէջն է։ Էն ժամանակն նա արտասվելով ասաց. սիրելի բարեկամներ և եղբարներ 'ի Քրիստոս՝ Աստուած ձեզ ամենիդ օրհնէ և վերջապէս տանէ երկնքի արքայութիւնը։

Մեծ իմ սովորութիւնս էն էր՝ որ էս բարեկամներիս հետ խօսակցութենով Աստուածաշունչ գիրքն կարդալով և աղօթքով պարապվիմ։ Ինչ ժամանակ որ էս ամէնն վերջացաւ, էնտեղ էլած բարեկամներին ասացի.

Աստուծոյ նախախնամութիւնն և շնորհքն էս ջահիլ մարդին յանձնեց իմ կառավարութեանս մինչև մին ժամանակ, և որովհետև գտել եմ սորան՝ որ ճշմարտութեամբ դարձել է դէպի Աստուած և արժանի է Քրիստոսի անունին. ապա ես էնպէս եմ հաստատել, որ նորան մկրըտեմ իրան սրտի ցանկութեան պէս։ Հիմիկ ես սորան քերել եմ էստեղ որ մասնակից լինի Քրիստոնէական խօսակցութեանս։ Ինչպէս որ առաջվայ մարդիքն հոգւով խօսակցութիւն էին անում. ինչ ժամանակ որ Աստուածամնից ընթացողներն խօսացին իրանց ընկերներին հետ՝ ոչ Աստուծոյ սիրաստին լինել նորանց առաջին. (Մաղ. 3. 16). Էնպէս էլ ես կարծումեմ, սիրելի՛ բարեկամներ, որ մենք ժողովել ենք մեր հոգիներըն Աստուածային բանով շինելոյ համար, և ապա կատարենք մեր եղբայրական և Աստուածահաճոյ պարտաւորութիւնըն։

Յետոյ երեսըս դարձրի դէպի Արաբն և հարցրի նորանից. Դուլիէլմոս, ասա ինձ քեզ ո՞վ է ստեղծել։

Աստ. Աստուած։

Ե՞. Քեզ ո՞վ է ազատել և փրկել։

Ն՞. Նորա որդին Յիսուս Քրիստոս, որ ինձ տեղակ մեռաւ։

Ե՞. Քեզ ո՞վ է լուսաւորել։

Ն՝. Սուրբ Հոգին. նա ինձ խրատել է՝ թէ ինչպէս պէտք է սիրել Ամենաբարի Աստուած Հայրն և նորա Որդին Յիսուս Քրիստոսին։

Ե՝. Դու ի՞նչպիսի վիճակումն ես ծնվել։

Ն՝. Ես չար անսուրբ մեղաւոր եմ. ես մեղքին ջոկ աւելի բան չեմ գիտում. ոչի՛նչ չեմ իմանում բայց մէնակ մեղքը. իմ հոգիս էլ շատ սև է քան թէ մարմինս։

Ե՝. Քեզանում իսկի էն ժամանակին ետև մին փոփոխութիւն գործվե՞ցաւ թէ չէ։

Ն՝. Ինչպէս եմ կարծում, թէ գործվեցաւ՝ բայց մին քանի ժամանակ վախումեմ՝ եթէ չէլաւ։

Ե՝. Եթէ դու փոխվել ես՝ ապա քեզանում էդ ինչ է գործել։

Ն՝. Ամենաբարի Հայրն Աստուած, նորա սիրելի Որդին Յիսուս Քրիստոս և սուրբ Հոգին Աստուած։

Ե՝. Ի՞նչ կերպով գործվեցաւ քեզանում էդ փոփոխութիւնդ։

Ն՝. Աստուծոյ կամքն էր, որ ինձ երեխայ լինելոյ ժամանակումս եսիր և գերի անեն։

Ն։։ Ի՞նչպէս Գոնելիէլմոս, ասումես թէ Աստուած ինձ եսի՞ր արաւ։

Ն։։ Զի իմ Տէր։ ես կամեցայ ասել։ Աստուած թոյլ տուաւ սպիտակ մարդկանց՝ որ ինձ իրանց եսիր անեն, և նորանով նա կամեցաւ ինձ բարի անել։

Ն։։ Ի՞նչպէս քեզ բարի արաւ սրանով։

Ն։։ Նա ինձ խաւար երկրիցն հանեց բերաւ դէպի լուսոյ երկիրն։

Ն։։ Մի թէ դու արևմտեան կողմի հնդըստանի կղզի՞ն ես ասում լուսոյ երկիր։

Ն։։ Զի։ լուսոյ երկիրն ինձ համար Ամերիկա երկիրն է։ էն պատճառն որ՝ առաջին անգամն էնտեղ եմ քարոզ լսել։ բայց էս երկիրս ինձ համար էլ աւելի մեծ լուսոյ երկիր է, որովհետև դուք էստեղ օրէցօր Յիսուս Քրիստոսի ողորմութիւնը ինձ յայտնումէք որ նա մեղաւորաց վերայ ունի։

Ն։։ Յիսուս Քրիստոսի արիւնը ի՞նչ է գործում։

Ն։։ Նա մարդին սրբումէ ամէն մեղքերից։ սրա համար ես էլ յոյս ունիմ՝ որ ինձ էլ սրբէ ամէն մեղքերից։

Ը։ Էդպէս նա ամէն մարդ էլ սրբու�մէ մեղքերից իրան արիւնովն։

Ն։ Ո՞ւմ։ չէ իմ Տէր։

Ը։ Ապա ով է սրբվում և փրկվում։

Ն։ Նա որ հաւատում է նորան։

Ը։ Կարող ես դու դրա համար վկայութիւն բերել սուրբ գրքերիցն։

Ն։ Կարող եմ. ով որ սրբուում էր հաւատաց, յաւիտենական էնոչ հոգեոյ, քայց ով որ չի հաւատաց, էնոչ հոգեաւ, քայց Աստուծոյ քարկոծիլն նորա վէրայ էր։ (Յոհան. 3. 36)։

Ը։ Ինչ է նշանակում՝ հաւատք ունենալն։

Ն։ Ես կարծումեմ թէ նշանակումէ՝ ամէն ժամանակ Յիսուս Քրիստոսիցն մտք անել. նորան սիրել ամենիցն շատ. հաւատալ՝ թէ ինչ բան որ նա ասել է ամէնն ճշմարիտ են. անդադար նորան աղօթք անել. իրան անձն մեծ մեղաւոր համարել, քայց նորան ամենաքաբի և ամենակարող իմանալ, որ ամէն ժամանակ կամենումէ և կարող է ինձ փրկել։

Ը։ Դու էդպէս հաւատք ունիս թէ չէ։

Ն։ Ինձ թուումէ՝ թէ պաղի ժամանակ էդպիսի հաւատք իսկի չունիմ։

Ե։ Ինչու համար էդպէս՝ Գուլիելմոս։

Ն։ Ինչ ժամանակ որ կամենումեմ միաւորվիլ սիրով նորա հետ, էն ժամանակն իմ սիրտս ցրվումէ. ինչ ժամանակ որ կամենումեմ էն քաներին հաւատալ, որ նա ասել է մեղաւորներին համար, էն ժամանակն մին քանի կարծիք են ծնվում ինձանում՝ թէ ինձ համար ճշմարիտ չեն։ Ինչ ժամանակ որ կամենումեմ աղօթք անել, էն ժամանակն սատանայն չար և ծուռ մտածմունք է քցում իմ միտքս և սիրտս, և ես Յիսուս Քրիստոսիցն բաւական շնորհակալութիւն չեմ արել։ Այս պատճառովս ես պակի ժամանակ իմանումեմ՝ որ ինձանում իսկի հաւատք չի կայ։

Ես իմացայ որ ամէն մարդ նորա խօսքերին շատ ականջ էին դնում և սրտակից էին լինում նորա հետ։ Յետոյ ասացի նորան. ես քեզ ցոյց կըտամ իմ բարեկամ՝ որ դու հաւատք ունիս. մտիկ չըտալով նորան՝ թէ դու ներհակիցն վախենումես։ Մին քանի հարցմունքի համար էլ ինձ պատասխան տուր։

Մի թէ դու հենց քեզանից և հենց քո մտքովդ սկսեցիր միտք անել՝ թէ մեծ մեղաւոր ես, և իմանալ թէ՝ մին փրկիչ պէտք է քեզ։

Ն։ Ա՞խ չէ. էս հենց էն ժամանակն իմ միտքս ընկաւ, որ ես նորա համար իսկի միտք չէի անում, և նորան իսկի չէի ուզում։

Ն։ Որ ուղարկեց էն բարի քարոզիչը Ամ-
բիկա երկրումն՝ որ քո հոգին արթնացնէ երան
քարոզովն։

Ն։ Հիտակ՝ որ Աստուած ուղարկեց
նորան։

Ն։ Ապա ով է նա՝ որ քո սրտումդ և մըտ-
քումդ սկսեց արթնացնել քեզ, որ հոգւոյ փրկ-
ութեան համար միտք անես։

Ն։ Մարդասէր և բարի Աստուածն։ Ես
ինձանից չէի կարող էն անել։ Ես հաստատ եմ
գիտում։

Ն։ Հաւատումես դու՝ որ Յիսուս Քրիս-
տոսըն և նորա փրկութիւնն հենց էն մին
բանն է, որ ամենիցն աւելի հարկաւոր է
և որ նորան ամենիցն էլ շատ պէտք է
ցանկանալ։

Ն։ Օ՛հ։ հա։ սրան հաստատ հաւատա-
ցած եմ։

Ն։ Հաւատումես՝ որ նա կարող է քեզ
փրկել։

Ն։ Հա։ նա կարող է ամենին էլ փրկել
որ նորանով մօտանումն Աստուծոյ մօտ։ պատ-
ճառն որ՝ նա միշտ կենդանի է նորանց համար
բարեխօսութիւն անել։

Ն՝. Հաւատո՞ւմես թէ նա ուզումէ որ քեզ էլ փրկէ։

Ն՝. Զեմ համարձակվում տարակուսիլ. պատճառն որ՝ նա էնքան ողորմած և բարի է, որ իրան խոսքերին պէս իրան մօտ եկողներին յետ չի քցիլ։

Ն՝. Կամենո՞ւմես և հետևո՞ւմես էլ նորա օրէնքին պահելոյ։

Ն՝. Ի հարկէ. ինչու որ՝ ես նորան սիրուումեմ և նորա համար էլ կամենուումեմ որ էն բաներըն կատարեմ որ նա ինձ հրամայուումէ։

Ն՝. Մի՞թէ կամեցողութիւն էլ կունենայիր նորա համար չարչարվելոյ եթէ նա կամենար.

Ն՝. Կարծուումեմ թէ կարող լինէի նորա սիրոյն համար մեռնիլ. նա չար և անսուրբ մեղաւորների համար մեռաւ, ապա անսուրբ մեղաւորներն ի՞նչպէս չեն ուզիլ որ էնպէս ողորմած և խոնարհ փրկչի համար մեռնեն։

Ն՝. Ապա իմ բարեկամ՝ ես հաստատապէս կարող եմ ասել քեզ, թէ քո հաւատքդ քեզ ապրեցրուց. (Ղուկ. Է. Ը)։ Ես կերպով վերջացաւ էս մին ուգամի փորձիլն։ Ինտեղ էլած բարեկամ մարդիքն լաւ ականջ դնելով էս ամէն բաներըս լսեցին։

Նորանցից մինն՝ որ էս խօսքերովս շատ շարժվել էր, ասաց։ Տէր՝ ես տեսնում եմ, որ ճշմարիտ քրիստոնեաներն ամէնքն էլ մին են, մտիկ չտալով նորան՝ թէ մինն սպիտակ է և մակէլն սև է։

Սորանից ետև Ռաբի կողմանէ խօսակցութիւն անելով աւելի ժամանակ անցկացրինք քան թէ ուրիշ վախտերն։

Ե՞ պոպի. Աստուծոյն գոհութիւն տանք որ նա մեզ վերայ էսքան ողորմած է և երգ երգենք մեր փրկչի սիրոյն համար։ Էս երգելոյ մէջն՝ մտիկ չի տալով գեղեցիկ ձայներին, ամենից էլ պատուական էր լինում սրտերի համաձայնութիւնն, որ շատ քաղցր էր։ Թէպէտ արաբն մեր երգելոյ կերպը սովոր չէր, բայց շատ մտիկ արաւ և շատ զգացողութենով ձայնը բարձրացրուց և նորանով ցոյց տուաւ՝ որ նա ճշմարտութենով սրտումն իմանում էր էն խօսքերը որ բերանից դուրս էին գալիս։ Էն ժամանակն որ էս երգը ասացին՝ թէ իսկի մին բան, բայց մէնակ անչափ սէրն ստիպեց փրկչին որ գայ աշխարհքս. նա իսպառ մոռացաւ, թէ մին ժողովուրդի միջումն էր, և բարձր ձայնով կրկնեց էս խօսքը՝ թէ իսկի մին բան, բայց մէնակ անչափ սէրն փրկչին ստիպեց որ գայ խեղճ Գուլիէլմոսի մօտն։

Ես ժողովքն վերջացրի մին քանի բաներ ասելով փրկութեան համար որ կատարվեցաւ մեզ համար Յիսուսի շնորհքովն և ողորմութեանովն։ Եւ էն մարդկանցն յորդորեցի որ իրանց պահպանեն և արքայութեան համար ջանք անեն։ Յետոյ Աբրաբի մկրտվելոյ օրն հաստատեցի և յայտնեցի, և ապա էս սիրելի ժողովրդի հետ բարևեցի և գնացի։ Լուսինն ամպերի միջումն շատ փայլումը որ ես գնացի մեր տունն և շափաղ էր տալիս կեօղերի միջումն։ Քաղցր խաղաղութիւնն և հանգիստութիւնն որ ամէն բաներում էր, զարմանալի էին անում էս տեսութիւնը։ Մին բոլէ սրանից առաջ շնորհաց և ողորմութեան Աստուծոյն փառք էինք տուել. քայց հիմիկ ընութեան Աստուածն ուզեց որ նոր շնորհակալութեան մատաղ բերեմ իրան ստեղծուածների գեղեցկութեան համար։ Ես Դաւիթ մարգարէին հետ երգեցի. Տէր Աստուածդ՝ թշնամիներդ պարտանուցի է քո առաջեն երկրի վրայ։ Բարձրեցար քո հեծութիւնդ երկնքի էլ քարշը։ Մարդն ինչ է, որ դու նրան յիշում ես քեզանից դորան, կամ մարդոյ որդին, որ նորա պատուիրում ես գնում։ (Սաղ. Ը. 1. 5)։ Մին քանի օր նրանից ետև Աբրաբն մկրտվեցաւ, և մին քանի օր էլ մնաց։ Յետոյ իրան Աղայի հետ Խանապարհ գնայ։ Էն ժամանակիցն ետև մինչև հիմիկ նորանից մին խաբար չեմ իմացել։ Կարելի է որ դեռ հիմիկ էս աշխարհքումս շուռ է գալիս զարիպի նման, և կամ փառքով գնացել է երկնքի արքայութենումն երանելի հոգիներին հետ

փառք և երկրպագութիւն է տալիս էն փրկչին որ իրան արիւնովն նորան փրկեց և ապրեցրուց։ Ինչպէս որ լինի, ես հաստատապէս հաւատացեալեմ, որ նա Աստուծոյ փառաց համար յիշատակ է. ինչու որ՝ Քրիստոսի պատկերն տրված էր նորա սրտին մէջ, և իրան կեանքովն պարզամտութենովն և կառավարութենովն ցոյց տուաւ Աստուծոյ էն շնորհքն՝ որ մէնակ կարող է մեղաւորները Աստուծոյ մօտ յետ դարձնել։ Աստուծոյ փառք տուէք։ (Սաղ. 67. 35)։

ՎԵՐՋ։

ԱՐԱԲԻ ԱՂՕԹՔՆ

—

Ո՛վ Յիսուս՝ որ շատ անպիտան հոգւոյ համար էլ հոգացողութիւն ես անում, ականջ դիր իմ սրտի աղաչանքին և լսիր խեղճ Արաբի աղօթքին։ Պատճառն որ՝ դու իմ մեղքերը և ցաւերը քեզ վերայ առիր, և ինձ համար խաչին վերայ քո արիւնը դիր թափեցիր, և սրա համար յոյս ունիմ թէ՝ մին խեղճ արաբի աղօթքն չես անարգիլ։ Լոս աղքատ արաբ տղայ էլայ և ծովի ղբաղումն շուռ եկի. սպիտակ գողեր իմ ծնողաց ձեռքիցն ինձ յափշտակեցին՝ որ էլ մին ժամանակ չի տեսի նորանց։ Բայց իմ վիճակս՝ որ շատ ծանր և ողորմելի էր երևում՝ շատ լաւ դառաւ, ինչու որ՝ իմ տանիցս հեռու քաշվեցայ, նորա համար՝ որ մին ողորմած փրկչի սէրըն ճանանչեմ։ Թէ և աղքատ էլայ և անարգված. բայց դու ո՛վ Աստուած ինձ մօտ էլար. և երբ որ քո ողորմութիւնը առաջին անգամ լսեցի և իմացայ, շիտակ որ՝ ամէն մարդից աւելի ուրախացայ և երանելի էլայ։ Շատ ժամանակ խաւարի մէջ անցկացրի և քեզանից ապստամբված էլայ. բայց քո մեծ

մարդասիրութիւնդ ով իմ Աստուածդ՝ ինձ փրկեց իմ ամէն մեղքերից։ Մարդկանց և հրեշտակների առաջին չար և ողորմելի մարդ էլայ. ինչու որ՝ թէ մարդկանց թէ մեղքին և թէ սատանային գերի և ենթի պէս ծառայութիւն արի։ Բայց թէ որ Աստուծոյ Որդին ազատեց ինձ՝ ապա ճշմարտութենով ազատ եմ. ապա մարդկանց և մեղքի և դժոխքի իշխանութենից ազատված եմ յաւիտեան։ Օ՛հ. ուղարկիր քո սուրբ խօսքդ էն հեռու երկիրն, որտեղ որ խեղճ արաբներն են բնակվում. սովորցրու նորանց քո ճանապարհն, քո ճշմարտութիւնն և քո կեանքն, և տուր նորանց քո շնորհքն և քո օրհնութիւնն։ Օ՛հ. շնորհիր, որ իմ սիրելի հայրս և մայրս էլ էնտեղ քո սէրն իմանան և տեսնեն. պատմիր նորանց՝ թէ Քրիստոս ինչ արաւ նորանց համար, և էլ թէ Քրիստոս ինչ արաւ ինձ համար։ Որտեղ է էն Աստուածն՝ որ Քրիստոնեաների Աստուծոյն նման լինի կամ նորա հետ հաւասար լինի. պատճառն որ՝ նա իմ հոգւոյս ողորմեցաւ. նա խեղճ Արաբի աղօթքին է ականջ դնում։ Տէր Յիսուս՝ դու քո արիւնդ թափեցիր հազարաւորների վերայ, որ ինձ նման են, նորանց էլ կանչի՛ր և նորանց էլ ինձ նման երանելի արա։ Շատ կան՝ որ խեղճ արաբ ծառային անարգում. բայց քո սէրն ինձ հետ է և իմ սիրտը ուրախացնում։ Հենց էն եմ ուզում՝ որ դու միշտ ինձ համար հոգացողութիւն անես. պահ-

պանիր ինձ մեղքից և փորձանքից ով Տէր՝ և արաբի աղօթքին միշտ ականջ դիր։ Երկրընքումըն փառաց արքայութիւնն կայ։ թէ որ էնտեղ մտնեմ՝ քո շնորհքով, ապա կըպատմեմ սուրբերին և հրեշտակներին՝ թէ դու ականջ ես դրել աղքատ արաբի աղօթքին։

ՊԵՏ. ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀԱՍՀ-ում CCPA
им. А. Мокацкиева
և ՀԱՍԱՆԻԿՈՒԹՅԱՆ